



## Վարկատեսակ «Սեզոնային»<sup>1, 2</sup>

#		ՊԱՅՄԱՆՆԵՐ	
1.	Միկրո վարկի (խմբային երաշխավորություններով ապահովված) Գ վարկատեսակ* <i>* նյութ բոլոր պայմանները՝ համաձայն տվյալ վարկատեսակի տրամադրման և մարման պայմանների</i>	Վարկի տոկոսադրույք	✓ 17.0 % տարեկան <i>Հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ</i>
		Ամսական սպասարկման վճար	✓ 0.35% <i>Հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ և գանձվում ամսական կտրվածքով</i>
2.	Միկրո Էքսպրես վարկ* <i>* նյութ բոլոր պայմանները՝ համաձայն տվյալ վարկատեսակի տրամադրման և մարման պայմանների</i>	Վարկի տոկոսադրույք	✓ 17.0 % տարեկան <i>Հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ</i>
		Ամսական սպասարկման վճար	✓ 0.35% <i>հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ և գանձվում ամսական կտրվածքով</i>
3.	Էքսպրես վարկ* <i>* նյութ բոլոր պայմանները՝ համաձայն տվյալ վարկատեսակի տրամադրման և մարման պայմանների</i>	Վարկի տոկոսադրույք	✓ 17.0 % տարեկան <i>Հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ</i>
		Ամսական սպասարկման վճար	✓ 0.35% <i>հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ և գանձվում ամսական կտրվածքով</i>
4.	Աշխատավարձով ապահովված սպառողական վարկ* <i>* նյութ բոլոր պայմանները՝ համաձայն տվյալ վարկատեսակի տրամադրման և մարման պայմանների</i>	Վարկի տոկոսադրույք	✓ 17.0 % տարեկան <i>Հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ</i>
		Ամսական սպասարկման վճար	✓ 0.35% <i>հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ և գանձվում ամսական կտրվածքով</i>

1 Այս վարկատեսակը գործում է համապատասխան վարկատեսակների ընթացակարգերով սահմանված պայմանների համաձայն

2 Հաճախորդը կարող է յուրաքանչյուր վարկատեսակից ընտրել միայն մեկ վարկ՝ կամ ընթացիկ սպասարկման վճարով, կամ առանց սպասարկման վճարի

## Զգուշացում

• ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱ ՄԱՍԻՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՎԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՁ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՍՏՈՐԵՎ՝

### ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 13. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը և բացատրությունները

1. Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n \frac{D_n}{365}}{(1+i)^{\frac{n}{365}}}$$

որտեղ՝

$i$  - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

$A$  - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը).

$n$  - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը.

$N$  - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

$K_n$ -կրեդիտի մարմանն ուղղված  $n$ -րդ վճարի գումարը.

$D_n$ -կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված  $n$ -րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

$i$  -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները կարգը հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Հոդված 14. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը

1. Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ կրեդիտավորման պայմանագիրը գործելու է պայմանավորված ժամկետում, և պայմանագրի կողմերը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում կատարելու են պայմանագրով ստանձնած պարտավորությունները:
2. Այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագիրը պարունակում է դրույթներ, որոնք թույլատրում են տոկոսների և (կամ) սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ կամ տատանումներ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, ապա տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի՝ ենթադրելով, որ տոկոսները և (կամ) սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև կրեդիտավորման պայմանագրի գործողության ավարտը:
3. Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս անհրաժեշտության պարագայում գործում են հետևյալ սկզբունքները.
  - 1) կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված կրեդիտի առավելագույն չափը մեկ միլիոն դրամն է.
  - 2) եթե կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, որ սպառողը կարող է կրեդիտի գումարը ստանալ մաս առ մաս կամ կարող է ընտրել կրեդիտի գումարը ստանալու պահը, ապա համարվում է, որ կրեդիտի գումարը սպառողին փոխանցվել է ամբողջությամբ կրեդիտավորման պայմանագիրը կնքելու պահին.
  - 3) կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի վերադարձման ժամանակացույց կամ կրեդիտավորման պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ և միջոցներ սահմանված չլինելու դեպքում կրեդիտի վերադարձման ժամկետը մեկ տարի է.
  - 4) այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագիրը սահմանում է կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա կրեդիտի վերադարձը կատարվում է կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ կրեդիտավորման պայմանագրով:
4. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված բանաձևի և տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ: